

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՊԼՀ-ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2018 թվականի Հոկտեմբերի 26-ի № 10 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՊԼՀ-ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 2019 թվականի հունվարի 30-ի N 7 նիստի որոշմամբ
խմբագրված տարբերակ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաառարակագիտական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԼՀ) գիտական խորհրդի կազմի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգերը:

II. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. ԵՊԼՀ-ի գիտական խորհուրդը կոլեգիալ մարմին է, որը քննարկում և սահմանված կարգով ընդունում է որոշումներ ԵՊԼՀ-ի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և համակարգման վերաբերյալ:
3. Գիտական խորհրդի որոշումները պարտադիր են ԵՊԼՀ-ի բոլոր ստորաբաժանումների, ֆակուլտետային խորհուրդների, աշխատողների և սովորողների համար:
4. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:
5. Գիտական խորհրդի նախագահը ռեկտորն է:
6. Գիտական խորհուրդը՝
 - 1) հաստատում է իր կանոնակարգը.

2) Հոգաբարձուների խորհրդին ներկայացնում է առաջարկություն կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, լուծարելու վերաբերյալ.

3) հասկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում քննարկում և ընդունում է որոշումներ ԵՊԼՀ-ի՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ընդունելության վերաբերյալ.

4) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում՝ օրինակելի), ԵՊԼՀ-ի և կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը և ուսումնական գործընթացը կանոնակարգող ներքին իրավական այլ ակտեր.

5) քննարկում և հաստատում է մասնագիտության կրթական ծրագրերը (ՄԿԾ-ները).

6) քննարկում է բուհի գիտական գործունեության ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ ԵՊԼՀ-ում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.

7) ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական և այլ կրթաթոշակներ տալու, ԵՊԼՀ-ի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու, լսարաններ, ստորաբաժանումներ անվանակոչելու մասին որոշումներ.

8) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, դասախոսների, պրոֆեսորների, դոցենտների և ընտրովի այլ պաշտոնների ընտրության կարգերը և ընտրության արդյունքները.

9) շնորհում է գիտական կոչումներ, հաստատում ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները.

10) ԵՊԼՀ-ի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազորմարմին է ներկայացնում առաջարկություններ ԵՊԼՀ-ի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր ներդնելու և իրականացնելու վերաբերյալ.

11) քննարկում է ԵՊԼՀ-ի եկամուտների և ծախսերի տարեկան կատարողականը ու նախահաշվի նախագիծը և ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ նախագծի վերաբերյալ.

12) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.

13) ըստ անհրաժեշտության՝ ստեղծում է գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքները, կազմերի ձևավորման կարգերը և աշխատակարգերը:

14) քննարկում և հաստատում է ըստ մասնագիտությունների ուսման վարձավճարի չափը:

III. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

7. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 60-ը, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են:

Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը, որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները, ֆինանսական վարչության պետը, գիտական քարտուղարը, ուսումնական բաժնի վարիչը, ֆակուլտետների ղեկանները, ամբիոնների վարիչները, արհեստակցական կազմակերպության նախագահը, գրադարանի տնօրենը, ինչպես նաև ընտրովի անդամներ:

8. Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածություններն առաջադրվում և ընտրվում են ԵՊԼՀ-ի ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների կողմից՝ համամասնության կարգով, որոնց ընտրությունը կատարվում է ստորաբաժանումների կանոնադրություններով սահմանված կարգով:

9. Գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնք հանդիսանում են ընտրովի անդամներ: Նրանց առաջադրում և ընտրում են համապատասխան ֆակուլտետների ուսանողական խորհուրդները: Գիտական խորհրդի կազմում առաջադրվում են բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողներ և ասպիրանտներ՝ համամասնորեն բոլոր ֆակուլտետներից: Գիտական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել այն ուսանողները, որոնք ապահովել են համապատասխան առաջադիմություն: Բակալավրի ուսանողները պետք է ունենան առնվազն 3.2 ՄՈԳ, մագիստրատուրայի ուսանողները՝ առնվազն 3.4 ՄՈԳ: Առաջադրված թեկնածուներին հաստատում է ԵՊԼՀ-ի ուսանողական խորհրդի նախագահությունը:

(կեդր խմբագրվել է ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 2019 թվականի հունվարի 30-ի N 7 նիստի որոշմամբ):

10. Գիտական խորհրդի անվանական կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով՝ հինգ տարի ժամկետով:

11. Գիտական խորհրդի անդամները պարտավոր են մասնակցել գիտական խորհրդի նիստերին և այն հանձնաժողովների աշխատանքներին, որոնցում ընդգրկված են: Գիտական խորհրդի նիստին չմասնակցելու դեպքում գիտական խորհրդի անդամը պետք է նախապես տեղեկացնի գիտական խորհրդի քարտուղարին՝ հայտնելով չներկայանալու պատճառը:

12. Գիտական խորհրդի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարում է՝

- 1) գիտական խորհրդի կազմից դուրս գալու վերաբերյալ գրավոր դիմումի հիման վրա,
- 2) գիտական խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,
- 3) զբաղեցրած պաշտոնից ազատվելու կամ համապատասխան կարգավիճակը կորցնելու դեպքում,
- 4) անհարգելի պատճառով պարբերաբար նիստերին չմասնակցելու՝ տարվա ընթացքում գումարվող նիստերի կեսից բացակայելու դեպքում,
- 5) համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կամ ուսանողական խորհրդի՝ իր կողմից առաջադրված անդամի փոփոխության որոշման հիման վրա,
- 6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նրան անգործունակ ճանաչելու կամ մահվան դեպքում:
(կետրը խմբագրվել է ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 2019 թվականի հունվարի 30-ի N 7 նիստի որոշմամբ):

IV. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:
14. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են գիտական խորհրդի նախագահը և գիտական խորհրդի քարտուղարը:
15. Գիտական խորհրդի նիստերը նախագահում է ԵՊԼՀ-ի ռեկտորը: ԵՊԼՀ-ի ռեկտորի բացակայության դեպքում նրա հանձնարարությամբ գիտական խորհրդի նիստը նախագահում է ԵՊԼՀ-ի պրոռեկտորներից որևէ մեկը:
16. Գիտական խորհրդի քարտուղարը ԵՊԼՀ-ի գիտական քարտուղարն է:
17. Գիտական խորհրդի նիստերը հրավիրվում են ուսումնական տարվա ընթացքում՝ առնվազն 8 անգամ:
18. Գիտական խորհրդի քարտուղարը գիտական խորհրդի նիստ (հերթական կամ արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ, իսկ արտահերթ նիստերի դեպքում՝ մեկ աշխատանքային օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն) գիտական խորհրդի անդամներին ուղարկվում է նիստի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ:
19. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել գիտական խորհրդի նախագահի առաջարկով, ինչպես նաև գիտական խորհրդի

- անդամների մեկ երրորդի պահանջով: Գիտական խորհրդի նախագահին արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:
20. Գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Գիտական խորհրդի անդամների ներկայությունը նախքան նիստը սկսվելը գրանցում է գիտական քարտուղարը: Քվորումը չապահովելու դեպքում գիտական խորհրդի նախագահի որոշմամբ գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև 30 րոպե, իսկ դրանից հետո քվորում չապահովելու պարագայում նիստը հետաձգվում է:
21. Քվորումի բացակայության պատճառով գիտական խորհրդի հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվում է սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:
22. Գիտական խորհրդի նախագահը՝
- ա) սույն կանոնակարգին համապատասխան վարում է նիստերը և հետևում է աշխատակարգի պահպանմանը.
 - բ) ելույթի համար ծայն է տալիս ըստ հերթագրման կամ ծայն խնդրելու հաջորդականության.
 - գ) սույն կանոնակարգին համապատասխան՝ կազմակերպում է քվեարկությունը և դրա արդյունքները դնում է հաստատման.
 - դ) իրականացնում է կանոնակարգով սահմանված այլ լիազորություններ:
23. Գիտական խորհրդի քարտուղարը՝
- ա) նախապատրաստում և գիտական խորհրդի անդամներին է ուղարկում գիտական խորհրդի նիստերի օրակարգը.
 - բ) կազմում և պահպանում է գիտական խորհրդի արձանագրությունները և որոշումները.
 - գ) հետևում է գիտական խորհրդի որոշումների կատարմանն ու պարբերաբար զեկուցում է գիտական խորհրդին դրանց կատարման ընթացքի մասին:
24. Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, ինչպես նաև գրավոր հարցման միջոցով:
25. Բացելով գիտական խորհրդի նիստը՝ գիտական խորհրդի նախագահը տեղեկություն է ներկայացնում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը:
26. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել հերթական նիստի օրակարգում ընդգրկել այլ հարցեր. առաջարկությունը սահմանված կարգով դրվում է քվեարկության:
27. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ որոշում է գիտական խորհուրդը:

V. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

28. Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են ռեկտորի հրամաններով:
29. Գիտական խորհրդի որոշումները չեն կարող հակասել ՀՀ գործող օրենսդրությանը, ԵՊԼՀ-ի կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

30. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմում է գիտական քարտուղարը խորհրդի նիստն ավարտելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Արձանագրությունը ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և քարտուղարը:
31. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ամսաթիվը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:
32. Գիտական խորհրդի որոշումները հրապարակվում են ԵՊԼՀ-ի պաշտոնական կայքում:

VII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդը որոշում չի ընդունում փակ (գաղտնի) քվեարկության մասին:
34. Ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի և պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների զբաղեցման և տեղակալման մրցույթների արդյունքները հաստատվում են գիտական խորհրդի կողմից՝ սահմանված կարգերին համապատասխան:
35. Գիտական կոչում շնորհելու մասին որոշումն ընդունվում է գիտական խորհրդի կողմից փակ (գաղտնի) քվեարկությամբ՝ համապատասխան ֆակուլտետի խորհրդի կողմից նախապես իրականացված փակ, (գաղտնի) քվեարկության դրական արդյունքների հիման վրա:
36. Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար գիտական քարտուղարը պատրաստում է քվեաթերթիկներ մինչև գիտական խորհրդի նիստը:

37. Քվեաթերթիկում նշվում են գիտական խորհրդի նիստի անցկացման ամսաթիվը, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները՝ «կողմ» և «դեմ»:
38. Քվեարկությունից առաջ գիտական խորհուրդը սույն կանոնակարգի 50-րդ և 51-րդ կետերի համաձայն ստեղծում է հաշվիչ հանձնաժողով:
39. Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, գիտական խորհրդին տեղեկություն է ներկայացնում քվեարկության անցկացման և քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ:
40. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը քվեարկությունը սկսվելուց առաջ գիտական խորհրդի քարտուղարից ստանում է քվեաթերթիկները, որոնք ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները:
41. Գիտական խորհրդի նիստին ներկա յուրաքանչյուր անդամ հաշվիչ հանձնաժողովից ստանում է մեկ քվեաթերթիկ և ցուցակում ստորագրում է իր անվան և ազգանվան դիմաց:
42. Գիտական խորհրդի խորհրդի անդամը քվեաթերթիկում նշում է կատարում իր նախընտրած տարբերակի դիմաց՝ համապատասխանաբար «կողմ» կամ «դեմ» գրառումներից միայն մեկի դիմաց դնելով «V» նշանը, որից հետո քվեաթերթիկը գցում է քվեատուփի մեջ:
43. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, մեկ-մեկ հանում քվեաթերթիկները, բարձրաձայնում քվեարկության արդյունքը և փոխանցում հաշվիչ հանձնաժողովի անդամներին, որոնք իրականացնում են քվեաթերթիկների տեսակավորում՝ ըստ «կողմ» ու «դեմ» ձայների:
44. Քվեաթերթիկը համարվում է վավերական, եթե դրանում քվեարկվել է միայն մեկ տարբերակ:
45. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:
46. Արձանագրության մեջ նշվում է՝
- 1) քվեաթերթիկ ստացածների թիվը (ըստ ցուցակի ստորագրությունների թվի).
 - 2) քվեատուփում առկա քվեաթերթիկների թիվը.
 - 3) քվեատուփում առկա անվավեր քվեաթերթիկների թիվը.
 - 4) «կողմ» և «դեմ» ձայների թիվը:
47. Արձանագրությունը ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները:
48. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները գիտական խորհրդի նիստում:
49. Քվեարկության արդյունքները բաց քվեարկությամբ հաստատվում են գիտական խորհրդի նույն նիստում:

VIII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

50. Հաշվիչ հանձնաժողովը ընտրվում է գիտական խորհրդի կողմից իր կազմից առաջադրված անդամներից՝ բաց քվեարկությամբ:
51. Հաշվիչ հանձնաժողովի անդամների թիվը չի կարող պակաս լինել 3-ից:
52. Հաշվիչ հանձնաժողովը իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ:
53. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկություններ, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգի պահպանումը, արձանագրություն կազմում է քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում է գիտական խորհրդի հաստատմանը:

IX. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

54. Գիտական խորհրդի որոշմամբ, ըստ անհրաժեշտության, կարող են ստեղծվել գիտական խորհրդին կից գործող մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը, կազմը և աշխատակարգը սահմանվում են գիտական խորհրդի որոշմամբ:
55. Հանձնաժողովները գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ իրականացնում են իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրում, նախապատրաստում և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին ներկայացում են առաջարկություններ:
56. Հանձնաժողովներն իրավասու են ԵՊՀ-ի մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր ու նյութեր: